

ՏՆՕՐԵՆ - ԽՄԲԱՍՏՈՒՄՆԵՐ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՆ	500 ՂՐ.
ՎԵՅԱՄՍԵԱՑ	250 »
ԵՐԱՄՍԵԱՑ	150 »

Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MANOUL, JOURNAL ARMÉNIEN QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



Մ Ի Ն Չ Ե Ի Ե Ր Բ

Անտիք դեռ իրենց մօր արգանդին մէջ կ'ընկած կ'որոնան թէ՛ երկնից արքայութեան արժանի հանգիստնալու համար, ո՞րքան անհաւատներ սպաննելու են, դեռ հազիւ հեզելու սկսած կ'ուսանին «կեանք» բառը և հազիւ ծալապատիկ գլխու օրորումներով կ'կարծեն տիրացած ըլլալ իրենց սուրբ գրքին, միջոցներ կ'խորհին քրիստոնեաներն իրաւունք յազատակելու, անոր պատիւը արատաւորելու, անոր ինչքին տիրանալու, անոր կեանքին սպառնալու:

Միլիոնաւոր Հայերու մահուան ճիւղաղային գաղափարն յղացողներն իթթի-հատականներն էին, այնպէս չէ՞, բոլոր յանցանքը անոնց վերագրելու հնչընուքով տողորուած, ճիւղաղային ծամածուծ թիւններով, աշխարհի ծանուցին թէ՛ թուրք տարրը անմահ կ'մնայ հայկական ջարդերուն և սողայիլական յր-գացումներուն առջև և դեռ երէկ եպարքոսը՝ Բարիզի մէջ կ'յայտարարէր թէ՛ իթթիհատականներն և Գերմանիա են բուն պատասխանատուները հայկական ջարդերուն և սպաննելու:

Հայկազեան ամբողջ բազմութիւն մէջ չենք գտներ պատշաճ բառ մը, որակելու համար աներեսութեան գլուխգործոց այս տապալուքները, ուրացումները, որոնք երբէք չեն կրնար որ և է ազդեցութիւն մը ընել մեր վրայ: Այնպէս կարծած ու համոզուած ենք թէ համաձայնականք եւս կարեւորութիւն չեն տար և չեն տուած այս արդարացումի խղճալիւթիւններուն և լաւ կ'ճանչնան թուրք ըստած ցեղը, թուրք ըստած գարշելի մեծամասնութեան հոգեկան ու բարոյական նկարագիրը:

Համաձայնական պետութիւններն անշուշտ չեն կրնար մտնալ թէ՛ թուրքի մասնակցութիւնն համաշխարհային պատերազմին, հիւսիսի բարբարոսներուն հետ, որքան սուղի նստաւ իրենց և որքան զբաղեցուց իրենց ուժերէն ո՞չ արհամարհելի մաս մը, զանազան ճակատներու վրայ:

Անտիք ամենքն ալ անշուշտ չեն մտցած և նմանապէս համոզուած են թէ այս տարրը չկրնար այլեւս կառավարելու թոյլտուութիւն ունենալ, և վեց դարերու փորձառութիւն մըն ալ այլեւս բաւ պէտք է համարուի:

Այո՛ իթթիհատակ և պատասխանատու, իթթիհատակ է սերունդը, իթթիհատակ է արիւնքը և հրէշային ծրարին երկնուն: Այդ իթթիհատակն զուտը ջախջախուած է ըսին իթթիհատակներն, և յաղթեցան վերջապէս կառավարութեան ղեկին ձեռք առնել և հազիւ հազ անոնցմէ հաս մը ձօճել կախաղանին վրայ, վերջապէս անոնք ալ, այդ սոսկաբոծ անուանուածներն իրենց կողմէ միաբերմաններ էին...

Սակայն իրենց պաշտօնի գլուխ անցած օրէն մինչև այսօր, այն բոլոր վայրերն, ուր չեն թափանցած համաձայնական ոյժերն, ա՛հ ու սարսափի մատնուած կ'առաջադիմ, ինչո՞ւ չեն կրնար գտնուիլ այդ տարողանած սոսկաբոծներն, որոնք անշուշտ, ինչպէս կ'սպասեն ու կ'հաւատան, իթթիհատակներն են, որոնք հաճախ չեն ուզեր գտնուիլ, որովհետեւ կ'վախնան մեղանչել իսլամին աստուածին առջև, որովհետեւ վրդովիչ տարր մը դարձած են քրիստոնեաներն, և իրենց երկրին կործանման պատճառ...:

Մենք այս տեսակ բացատրութիւն մը միայն կրնանք գտնել և որչափ ատեն որ իրաց ներկայ վիճակը շարունակուի, անբացատրելի ներդաժատութեան մը, դեռ հայ իրականութեան մէջ պիտի գառապարտուինք աւելցընելու շատ մը տխուր էջեր:

Ան ձեզից Պերկամի նոր դէպքը, որու մասին՝ այս տողերն գրուած պահուն՝ մանրամասնութիւններ չկան, բայց հայ քահանային մորթուողիւն, պաշտօնապէս հազարուած Գեր. Սրբաբարձունք առ Հայոց աստղորդական փոխանորդը:

Միթէ դարձեալ իթթիհատակներն առաջ բերին այդ դէպքը, որ կարծուածին չափ թեթեւ չէր իր և անցած պնդումին համեմատ կանոնաւոր ջարդ մըն է կ'ըսուի, Հայոց և Յունաց ղեմ լսրուած:

Քաղաքակիրթ ազգերը բողոքելու տարբեր զրուցութիւններ ունին, թուրքերու բողոքի ձեւը ջարդն է, որ նուիրագործուեցաւ եպարքոսին տուած զեկուցադրումն՝ առ համաձայնական պետութիւնները:

Մինչև ե՞րբ մեր դժբաղդ ազգը պիտի զոհարուի, մինչև ե՞րբ արգարութիւնն ներդաժատ պիտի գտնուի այս անհանգուրձելի ու ընդվզեցուցիչ կացութեան...:

Հ. Մ.

ՅՈՒՆԻՍԻԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵ

ԱՆՕՐԻՆԱԿ ԵՐԵՎԱՆԻ ՄԵ

Անցեալ օր Պիղմարքապուրի բնակող իմ մէկ բարեկամէս ստացայ նետեալ գրութիւնը. իր ընծայած մեծ շահեկանութեան համար արժանի գատնցի զայն յուշատետրիս մէջ անցնելու:

S. Թ.

Պիղմարքապուրի 23 Յունիս 99 Սիրելի՛դ իմ Թորգոմ,
Այսօր մեր քաղաքին մէջ տեղի ունեցաւ հսկայ և անօրինակ ե-

րեւոյթ մը, որուն հետաքրքրական մէկ քանի փուլերը կ'ըզեմ քեզի ներկայել: Անշուշտ լսած ըլլալու ես թէ «պիլ-պիլ»-ները, զգուշով այս երկրին սոճի պատմութիւններէն և ուղղով միանգամայն միջոցով վերջ տալ քաղաքակիրթութեան յոյսէն զրկուած այս որջին մէջ տեղի ունեցող ճիւղաղային և անդարձաբնական արարուածներուն, ինչպէս Հօթէլ-Բօնի ամեն կողմ, հոս ալ սկսած են իրենց ուժերով ստնծել կիսավայրենիները: Սակայն ասիկա ճշմարիտ աղէտ մը նկատուած է բոլոր Հօթէլ-Բօնիները կողմէ. անոր

մէջ կը տեսնեն իրենց գոյութեան վախճանը և գառապարտեալ օրհասականի ճիւղերով կը ջանան անգամ մը ևս խոյս տալ վճիռէն:

Նախ օրերով լացին, յետոյ սպիտակամորթներն սաքերը լիզելով խոտացան այլևս անոնց պէս ապրիլը այց ալեւ ոչ ոք կ'ազէր խարուի այս վիշտաներուն կեղծաւոր գալու-րումներէն: Այսօր սակայն, անտիք բոլորովին յուսահատ, տակաւին արմատախիլ չեղած իրենց թունաւոր ժանիքները յուսացուցեցին, սրեցին ու կրճատեցին մահ ու աւեր սփռելու ըստ պատմութիւնի տեղացեցելով:

Մէքահի կոյս անտատին ժուաքին գանուող ընդարձակ բացառի մը վրայ հուսաբուած էին հարիւր հազարաւոր Հօթէլ-Բօնիներ. սղբալու համար իրենց անցեալ փառքը, վերապրեցնելու համար իրենց մահամերձ բնազդները վայրենական և իրենց օրհասին, անգամ մը ևս ճանչցնելու հանուր աշխարհի՛ անհար մեծութիւնը իրենց աւերիչ ուժերուն:

Ամեն տեղ կը ծածանէին սպիտակ կտաւի կարներ ինչպէս սուգի և ամենուն աչքին մէջ յայտնի կը կարգացուէր գերագոյն վշտով մը զոպանակուած հրէշային խորհուրդներ:

Հետզհետէ ծառերուն վրայ մագլցեցան խճապետներ և շատ ողբալի ձայներ հանեցին: Անոնցմէ մին ըստ «եթէ ազգայակներ մեր ամենէն հրգոր ձայնովը, մեզի լոռ պիտի ըլլայ»:

Ու ամբողջ հազարներու սկաւաղոտալ այդ միջոցին անտատին խորը գանուող վայրի գազանները՝ ևս իրենց մենչիւններով և ունումներով ընկերացան ամբոխին, ա՛լ աւելի հզոր գարններու համար անոր բողոքի ձայնը:

Քիչ յետոյ գիտախու մատակ հօթէլ-Բօնի մը էպիլոքի անուն, որ համբուար է իբր լաւ մարդու խորոված միս ուտող մագլցեցաւ ծառի մը վրայ և հետեւալ խոսքերը արտասանեց. «Ասկէ վերջ ալ իսկ չպիտի կրնանք ազատ ապրիլ, չպիտի կրնանք ուրիշները սպաննել մեր ուզած, հնարած և կատարելագործած ձեւերով. չպիտի կրնանք թալլել, կողոպտել, չպիտի կրնանք քաղաքներ տուրել և հրդեհի բողոքու ու ձուխերու տեսելքը վաշելի: Մեր եղբայրները չպիտի կրնան սպիտակամորթներուն կիները տառանգել, չպիտի կրնան ոսկորէ բորգեր շինել և սպառնալու կարմիր գետերը ալեւս պիտի ցամաքին երևակայեցէ՛ք, սիրելիներս, այս բոլոր բարիքներէն կ'ուզեն զրկել զմեզ: Ասիկա մեզի համար մահ է. բայց մենք չենք ուզեր մեռնիլ»:

Հարիւր հազարաւոր ձայներ կրկնեցին «Չենք ուզեր մեռնիլ»:

Այս միջոցին ծառերու գազաթեւուն վրայէ կ'օտուարները աղօթքներ երգեցին, իրենց վայրագ Աստուծոյ օգնութիւնը հայցելով որ չորիկ զիրենք իր արքայութիւնը ժառանգելու միջոցներէն: Ամբողջ մոլեգնած պալուս, պալուս (Աստուած, Աստուած) կ'աղաղակէր կրօնաւոր մը ձեռքի շարժումով մը հանդարտեցուց ամբոխը, ստաւ կարմիր կտաւի կտոր մը որուն վրայ մանգող մը նկարուած էր, այդ կտորով սրեց արտասուածքը աչքերը, յետոյ համբուրեց մանգողը և յս վիշ շեշտեց ըսաւ.

«Պա՛ւրը միշտ մեզի պիտի տայ բաւական ուժ բռնելու համար այս մանգողը, անով հնծելու համար ըստ պիտակամորթները և անով մտնելու համար իր արքայութիւնը»:

Այս պատգամէն վերջ ամբողջը սրտախորտիկ ներշնչեալ և ոգևորեալ սկսաւ ցրուիլ բայց ամենուրեքմէ վրայ դիւրաւ կարելի էր կարգալ սրտերու մէջ կուտակուած անդարձ կրօնատի մը անհար վիշտը:

Այս ողբերգական հաւաքոյթը, զըւարձալի տեսարանի մը տպաւորութիւնը ըրած էր քաղաքակիրթութեան զինուոր սպիտակամորթին վրայ, որոնք չղթայ մը կազմած հուռէն կը հսկէին:

Ես ալ գրեցի այս ամենը խորհելով որ պիտի կարենամ շիթ մը ժպիտ ցողիլ այնցուրէր սրտիդ վրայ որուն հառաչանքներուն արձագանքները հոստեղի վայրի գազաններն անգամ լայուցին:

Միշտ քոյդ ՀԱՅԱԿ

ՊԱՏԱՍԻԱՆԻ ՄԵՊԱՏԱՍԻԱՆԸ

Շարաթ օրուան «Պաշինք»-ին մէջ մեր մէկ գրուածքին պատասխանը սիրով կարդացինք:

Ուրախ ենք որ յողուածագիր Պ. Տօք. Յ. Դարբինեան մեզի բարեխոստանալիք մը տուած կ'ըլլայ այդուտի լաւագոյն կերպով լուսարանուելու լուսարանելու համար: Պ. Տօք. զմեզ հարուածելէ առաջ՝ մեր գրուածքին իմաստը չէ ուզած ըմբռնել: Մենք այդ գիշեր իբր պահանջուած և ակնշարտ վկայ ամեն տեսած և լսած բաներիս առանց չափազանցելու, գրած ենք: Դուք ևս մեր կողմէն, կրնայիք, ինչպէս որ արդէն ըրած էք, սկզբնապատճառներուն վրայ խօսիլ:

Սրկորդ, կ'ըսէք թէ «Մեր բռնած տարողի ընթացքը» խօսքերնէս այնպէս կ'հետեւեցնէք իբր թէ այդ ամարգի բառը տարագրելոց յանձնախուրհին ուղղած կ'ըլլանք եղբարայց երբ մարդ մը «մեր» կ'ըսէ և կատարագրէ, իր խօսքերը իր անձին և իրեն նմաններուն ուղղած կ'ըլլայ հետեւաբար մենք տարագրելոցին մէջ անդամը չենք եղած որ մեր խօսքը անոնց ուղղուած ըլլար: Դարձեալ տեղի վարը կ'հարցնէք թէ մինչև ե՞րբ կ'ուզէք որ այդ մարդիկը կերակրէիք: Մենք մեր յողուածին մէջ մարդիկը միայն այդ գիշերուան համար պատառ մը հայ և վաղուան համար գործ են. կ'պահանջէին, ըսած էինք: Ձեր մէջը կրօններուն մէջ կ'ըսէք թէ չէք ուզեր այլևս ատոնց նպատակը, որովհետեւ ատոնցմէ ամենք իրենց տրուած հագուածեղէնները ծախած և ինքզինքնին կերտ խուճի տուած են, և մինչև իսկառ ո՞նց մէջ կարար գործածողներ կ'գտնուին: Թէ ատոնց մէջէն կըրնաք մեզի ծոյլեր, գատարկապարտներ, խաչագողներ և չլիտեմ ուրիշ ինչեցեցեցներ: Ընդունելով հանդերձ թէ ինչպէս ամենուս, ամանակ ալ ատոնց մէջ կրնան ատանկ գտնուիլ թերութիւններ ունեցող մարդիկ գտնուիլ: Կուզէք ամենք մէկ շուրջ լաւալուրկա ընդունելի չէ: Ինչպէս անպատուաբեր անակ ալ պատուաբեր ազգք կրնան գտնուիլ ատոնց մէջ, որոնք թերևս մեզմէ աւելի աղէկ օրեր տեսած, մեզմէ աւելի լաւ կրթութիւն տաած և

Թերևս իրենց ձեռնարկներն մէջ մեզ մէ աւելի սիրում և յարգում էին խեղճերը:

Ահա այս տեսակները փնտելում և գտնելու գործին մէջ թերանալուն համար է որ սոցիալ մեղս գրիտի կը գտնենք:

Կ'ընէք նաև թէ ատոնգոմե ոմանք գիրքի գրած և ոմանց ալ զրոյս գրուելու տակ էք, բայց անոնք գնահատել և արդիւնաւորել պիտոցան չեն:

Մոռնալու չէ որ եթէ երբէք կ'ուզէք որ մարդ օգտակար և արդիւնաւոր գործ մը տեսնէ, պէտք է որ այդ մարդուն իր գիտցում և սիրամ մէկ գործը տաք:

Այսինքն վարժարանէն շրջանաւարտ եղող և կամ այնինչ բարեկեցիկ ընտանիքին պատկանող աղու մը լուսնութիւն մտնող մը, ուրիշ մը չունի մը կամ «արխիւրի» մը, ուրիշ մը չունի մը, այսինքն հայրնայնիւ խնայելով չի վերջանար: Անոնց մէջ հոգիի աշխատութիւն ունեցողները անտեսուելու չէ:

Այս տեսակ գործերուն յարմարութիւն ունեցողներ ալ կ'ընդունինք թէ կրնան գտնուիլ:

Վերջացնելէ առաջ ըսենք թէ նըպատումը որչափ ալ խոշոր լըլայ, տեսական օգտակարութիւն մը չիրար ունենալու և աւագոյն միջոցն է շնորհքով տղոց փոխառութեան ձեւին տակ գումար մը տալ և իրենց հասկըցած մէկ գործին տէրը դարձնել: Եւ կամ հրատարակի վրայ եղող և գիրք մը ունեցող մտնելու մէկ հայ ատոնցմէ մէկ կամ երկուքը գործի մը կամ պաշտօնի մը մտցնել:

Կ'տեսնէք ուրիշ Պ. Տր. Յ. Դարբինեան թէ մեր մտածումներուն մէջ խոստանք զրոգելու ձգտում մը չկայ, այլ մեր կարողութեան չափով կ'ուզենք համազօրեմք մեծ ցաւին դարման մը փնտելու ու գտնել:

ՍԱՐՊՈԼ

Քաղաքացիական Լուրեր

ՅՈՒՆԱԿԱՆ Թերթ մը կը տեղեկացնէ թէ Կովկասի Հայկական բանակը Հասան Գալիի մօտ ընդհարում մը ունեցած է թրքաց հետ Այս կողմի մէջ թուրքերը յաղթուած են և այս լուրը թանկէն վերջնէն չափով կը գրուեն: Երբոր յանաջանալով միտնէ 20 քիլոմ. ներս իր յանաջանալով ընթացքին Հայկական զօրքը քանի մը զինագործութեանց կը հանդիպի, որ զիւրու կը չէղբացնէ:

«ԵՊՏ ՏԸ ԲԱՐԻ» Թուրքիոյ բաժանման վրայ հետեւեալ կը գրէ:— Չորսերու ժողովը կ'ըզդի Թուրքիոյ վերաբերեալ յանձնառութեանց խնդրով Ալիին զին վերջնականապէս որոշուած է: Բայց ընդհանուր լուծումը հետեւեալ կերպով կ'որոշուի: Յուսանալու կ'ստանայ Իզմիրը իր սեփականութիւն, իսկ նոյն գումարին մնացեալ մասերուն համար միայն յանձնառութիւն մը պիտի ընդունի: Թուրքիա կը ստանալու Պրուսիա, Էնկիլիթի, Գասթէմալի, Աստրախի և Գոնիաի վերջնականութիւն մէջ: Երբնց առաջին երեքը Ֆրանսայի հովանաւորութեան տակ պիտի գրուին, և վերջին երկուքը Իտալիոյ:

Մ. Մօնթիլի, Հնդկաստանի նախարար Անգլիոյ դահլիճին մէջ, Պիքսիի Մահարաջան և Հնդիկ սկանաւոր անձնաւորութիւններէ՝ բազկացած պատերազմութիւն մը առջի օր ըտեցաւ Չորսերու Խորհուրդին կողմէ: Անոնք բողոքեցին Թուրքիոյ անկախութեան դաշտը ու է ձեռնարկի գէտ, ըսելով թէ Թուրքիա իրամտութեան աչքին դեռ կը մնայ մահմեդական մեծ տէրութիւն մը: Յիշենք որ պատերազմի առաջին տարիները Սիմլայի վարչիները միշտ հակառակեցան Թուրքիոյ գէտ պատերազմելու քաղաքականութեան, և «Փորին Օֆիսի» Արաբացոց հետ դաշնակցելու ձգտումը: Անոնք 1917-ին է որ ձեռն

բերուած շահերը տեսնելով Հնդկաստանի կառավարութիւնը իր գաղափարը փոխեց:

ԹՈՒՐԻՍԻՅԱՆ Կառավարչին մտնելու «Երբոր» կերպ խորհրդածութիւններ վերջնականապէս թեան կը յանդիպէ պէտք չէ նաև մտնող Ֆրանսան և կ'ընէ: Ֆրանսա նետուած է այնպիսի վայր մը որ ոչ մէկ կերպով համապատասխան է այն ծառայութեանց զորս մատուցած է ամբողջ Արեւելքի մէջ: Պ. Գլիմանս «Ազգերու Ընկերութեան» պատրուակին տակ, թողոք որ իր ձեռքէն ստանն 1916 ի դաշնակցի, կ'ընուած Ֆրանսայի և Անգլիոյ միջև: Յետոյ կ'որոշուց յաջորդաբար Պոտիսմոսը, Մուսուլը, Տրաքիան, Մերսինը և Աստանան:

Արդեօր մեր Ամերիկայի բարեկամները, Հայաստանի պաշտպանները կ'որոշան շահագործել կ'իջկիան, մեք կը սանձառնականութեամբ ամեն ամուլ մտնող մէջ և իր փոխարինութիւն կ'ուզեն մեղքեւհեղձութեամբ յայտնելու մնացեալ կիսուն պաշտպանութիւնը: Անկախ, խարուողներու տեսակ մը սակարկութիւն է այսպիսի սակարկութիւն մը կ'ընելու առաջ հասարակաց կարծիքը պատրաստ է բողոքել:

Ազգային Անցուղարձ

Պերկամաի և Մէնէմէնի մէջ պատահած զէպերու մասին կ'ընտարարենք համառօտ կիսապաշտօն տեսնելու մը: Երէկ առաւօտ յաղաքէն դէպի Պերկամա մեկնելու համար Հայոց կողմէ պիտի երթային քանի մը անձեր տեղւոյն վրայ քննութիւն մը ընելու համար, բայց վերջին պահուն յետաձգուեցաւ, որպէսզի որոշ տեղեկութիւններ քաղուին թէ՛ քահանայէն զատ ուրիշ զոհեր կ'օգտուին: Պերկամաի մէջ ծանօթներ ու սպառկաններ ունեցողներն զիմած են յունաց մետրապոլիտ Գեր. Սրբաբարձար, որպէսզի տեղեկութիւններ ուղէ և Յունաց առաջնորդն խոստացած է հարկ եղածն ընել: Հայոց կողմէ գիմում պիտի կատարուէր նաև Համաձայնական միտ բոլոր պետութեանց մօտ, խնդրելու համար հարկ եղած քննութիւնն, սակայն նկատելով որ հեղինակներու կողմէ խոստացուած է հարկ եղած մանրամասնութիւններն ստանալ՝ այդ գիմումը չէ կատարուած:

Գորտէլիտէն փոքրիկն Ժիրայր Թորոսեան իր ժամացոյցը ընկերներուն մէջ վիճակահանութեան գնելով գոյացուցած հասոյթը 4 ոսկի կ'ընտրէ Կեդր. Որբանոցին (Գ.Ո.)

ՄԵԿԵՆՈՒՄ

Իզմիրի ծանօթ ընտանիքներէն և հայ բարձր դասուն մէջ իր լիզուսակաւութեամբ, ընդունելութիւններու, նպատակաւորաց հանդէսներու մէջ իր գրուած բարձր գիրքով հանրաժանութիւն Տիկին Մարթիա Ս. Աւետիքեան իր զաւակաց հետ երէկ մեկնեցաւ քաղաքէն դէպի Անգլիա: Կսկելու համար մօտէն իր զաւակաց դատարարութեան վերջերս Տիկին Աւետիքեան անձնուէր զոհարարութեամբ մը նըւերուած էր Կեդր. Որբանոցի խնամակալութեան գործին և իր ատենակալութեան կ'վարէր այդ փափուկ պաշտօնը: Իզմիրի հայ իգական սեռն մասնաւորապէս և Իզմիրի հայութիւնն ընդհանրապէս Տիկին Աւետիքեանի բացակայութեամբ զգալի կորուստ մը կ'ընեն: Բարի ճամբորդութիւն կ'մտադրենք յարգելի տիկինը:

Տր. Յ. Գարբինեան

ՄԱՍՆԱԳԷՏ
ՆԵՐՈՒՆ, ԱՌԱՆՆ ԵՒ ՏՂԱՅՈՑ
Հիւանդութիւններու
Հիւանդ կ'ընդունի բացի կերակրեալ ամեն օր: Առաւօտ ժամը 10-12 ին եւ Կ. ետք 3-5
ՊԱՏՅՈՒՍՏԵԼԻՆ.— Հայոց բազմաթիւ փոքր քիւ ՏԷ:

Տեղական Լուրեր

ՊԱՇՏՅՈՒՍԿԱՆ ԱՅԴ

Պերկամաի մէջ մեր ունեցած սկար սեւը յարձակում կրած ըլլալով աւազակային շատ աւելի մեծ ուժի մը կողմէ: ստիպուած է քաշուիլ միշտ և Մէնէմէն քանի մը կորուստ տալէ վերջ:

Բաւականաչափ զինուոր զրկուած է յիշեալ վայրը, որպէսզի մաքրին այդ աւազակային խումբերը և հաստատեն կարգապահութիւնը:

ԻնՊիՅ յայտն է տեղեցոյցին հաստատութիւնը, Իզմիրի գրուածն առթիւ, շնորհաբար հետապիւր ուղղած էր Ֆրանսական հանրապետութեան նախագահ Մ. Բուանքարէի: Երկ տեղւոյն Ֆրանսայի հեւպատու, Մ. Լարարտ նամակով մը ծանուցած է մետրապոլիտարին թէ, ներքին գործոց նախարարի միջոցաւ նախագահ իր շնորհակալութիւնները յայտնելոյն սպաւին:

Գեր. Սրբաբարձար առջի օր այցելու թեան գացած է հեղին բանակին բժշկապետ զօրավար Արնօի «Մարթիա» թղթակցի Լիպլեմի, ինչպէս նաև Մ. Լոյսի:

Իզմիրի հեղին բանակի վերին հրամանատար զօր. Նիտէր Մէնէմէն իզգլէ պէյի հետ երկար խորհրդակցութիւն մը ունեցած է:

Մէնէմէնի անցուղարձներուն մասին հետեւեալ մանրամասնութիւնները կ'ընտարարենք:

Պերկամաի քաղաքը Հեղին գինւորները կրթութիւնը կ'ընտարարէ, կ'ըլլան տեղացիներէն, որոնք հրացաններ կը պարպեն անոնց վրայ: Այս պատճառաւ փոսոցներուն մէջ յանկարծական խռովութիւն մը կը պատահի, որ հաղի մէկ ժամ կը տեւէ: Նոր ուժեր զրկուած ըլլալուն անմիջապէս կարգապահութիւնը վերահաստատուած է: Մէնէմէն հասնող ուժերէն մաս մը ճամբայ ելած է դէպի Պերկամա, տեղւոյն մէջ ևս հաստատելու համար կարգը:

Հեղին Կ. Սալի տեղւոյն մասնաճիւղի բժշկապետ Պ. Յունուքսա հետեւեալ սոցիալ հրատարակ հանած է: Մայիս ամսոյն ընթացքի հեղինական հեղանդանոցի արտաբանական, վիրաբուժական մասերու ներկայացած են: 3030 հիւանդներ, 1087 հիւանդ յոճալու են: Այլեւս թաղին բուժարանը, 150 անձեր խնամուած են իրենց տեսչուն մէջ կարմիր խաչի կողմէ, 126 հոգի փոխադրուած են անմիջական օգնութեանց կայանը, 99 հիւանդ ընդու. նուազ են յունական հիւանդանոցին մէջ, 307 քիմիական, սխտարանական վիրուժումներ կատարուած և 3880 դիագնոզի կերպով հայթայթուած է:

ԵՐԷԿ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս, 19 Յունիս 1919

- «Երբոր» Թուրք Թերթը կը գրէ թէ, Եւրոպայի մէջ ի նպաստ Թուրքիոյ հասանք մը յարակ կուգայ:
- Ամերիկեան յանձնախումբը պիտի միտնայ համաձայնական յանձնախումբին և իր տեղեկագիրը Չորսերու Խորհուրդին պիտի ներկայացնէ, երբոր Փարիզ վերադառնալ:
- «Մօնթիլէ» Օրբանթարը կը գրէ թէ Չորսերու Խորհուրդը Թուրքիոյ հացցին, Յունիսի կէսէն առաջ լուծում մը չպիտի տայ: Ուրիշ հեւազիւր մը կ'տեղեկացնէ թէ, Գերմանիոյ հետ հաշտութիւնը կ'ընտարարուի վերջնէն որ, Համաժողովը թրքական հարցով պիտի գրադի:
- Անմիջապէս որ Չորսերու Խորհուրդը Օսմանեան պատուիրակութիւնը ընդունի պիտի վաւերացնէ Հայաստանի և Արարիոյ անկախութիւնը:
- Փարիզէ հասած հեւազիւրներ կը տեղեկացնեն թէ Եպարքոս Տամատ Ֆէրիտ փաշա կ'աշխատի յարաբերութեան մասին Պ. Պալէնիզիլիաի և Պօղոս Նուպարի հետ, թրքական հարցի լուծումը գիւրացնելու նպատակաւ:
- Ճարտնական պատուիրակութեան պետ Պառն Մաքիմ Չորսերու Խորհուրդին անդամ ընդունուած է: Այսուհետեւ յիշեալ Խորհուրդը պիտի կոչուի Հինգերու Խորհուրդ:

COMERCIAL UNION ASSURANCE CO., LTD.
FIRE & LIFE
ՄԵԾ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
ՍՏՈՐԱՐՈՒԱԾ ԴՐԱՍԱԳԼՈՒԻ Լ.Տ.
ՏՐԱՍԱԴՐԵԼԻ » » »
ԱՆԳԼԱԿԱՆ ՈՍԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՍԻ
Կապահովագրեալ ամեն տեսակ ապրանքի եւ կարնաճի
Ընդունուած գործակալ
ՍՊԱՐԹԱԼԸ ԵՂԱՐԲ
ՈՒՐԲԱՆՔ ԳՍՏՈՒՄ

2,500,000
2,250,000

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 20 Յունիս 1919

- Գերման պատուիրակներուն բողոքին վրայ հաշտութեան դաշնագրի նախնոցմէ ստորագրուելու համար մինչեւ երկու շաբթի ժամը Ղը պայմանաւորում տրուած է:
- Տամախու ժողովը կ'ընտարարուած է:
- Չորսերու Խորհուրդը Թուրք պատուիրակներու բերանացի յայտարարութիւններն մտիկ ընելու որոշած է, ինչ որ չբրաւ ո'չ Գերմանիոյ և ոչ ալ Աւստրիոյ պատուիրակներուն:
- Ֆրանս. մամուլը Թուրք պատուիրակութեան մասին համակիր լեզու մը սկսած է գործածել:
- Գերմանիոյ կողմէ յանձնուելիք իթիհատականները Մալթա կամ այլուր պիտի փոխադրուին:
- «Մոնթիլէ» Օրբանթարը, ընտրութեանց տարի, այնպէս կը կարծէ թէ՛ Այալընի, Ատանայի և Քիւրտիսթանի մէջ ընտրութիւններ ընել կարելի չպիտի ըլլայ:
- Այնպէս կ'արձուի որ եթէ Գերմանիա հաշտութեան դաշնագրով ստորագրէ, զալ շարքի ևս Թուրքիոյ հաշտութեան պայմանները պիտի ներկայացուին: — Գրոնշտատ գրուուած է:
- Պօլէ վերջին Անգլիացոց հետ եղող Սպիտակ գործոց կողմէ շարունակ